

ԲԱՆՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՅՈՒՆԱՏԱՌ-ՀԱՅԵՐԷՆ

ԾԱԾԿԱԳՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹԻՒՆԸ



Անցեալ տարի Երուսաղէմում գտնուած Ժամանակ, Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի Մատենադարանի հայկական ձեռագրերն ուսումնասիրելիս, մեր ուշադրութիւնն առանձնապէս գրաւեց № 1297 ձեռագիր-ժողովածուն: Նա պարունակում էր նորայայտ այնպիսի նիւթեր, որոնք մեծ արժէք են ներկայացնում հայագիտութեան համար: Այդ նիւթերի մի մասը, Երուսաղէմի Ժառանգաւորաց դպրոցի տաների օգնութեամբ, մենք արտագրել ենք, և յառաջիկայում մեր ուսումնասիրութեան նիւթը պիտի դառնայ: Մենք այժմ ցանկանում ենք կանգ առնել այդ նիւթերից մէկի վրայ՝ միայն՝ յունատառ-հայերէն ծածկագրի վրայ, և փորձել վերծանել այն:

Նախքան ծածկագրին անցնելը, փոքրիկ ծանօթութիւն տանք ծածկագիրը պարունակող ձեռագրի մասին:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի № 1297 ձեռագիրը գիտական-իմաստասիրական նիւթերի ժողովածու է, որն ամենից առաջ հետաքրքիր է իր գրչութեան արուեստով. պատկանում է Տփիսիսի հայոց գրչութեան դպրոցին. գրուած է Ամենափրկիչ վանքում 1363 թուին: Այդ մասին ձեռագիրն ունի հետեւեալ փոքրիկ յիշատակարանը. «Փառք հաւր և որդոյ և հոգոյն սրբոյ այժմ և միշտ . . . Արգ՝ գրեցաւ ի թուարեւութեանս հայոց Պ և ԺԲ (812 + 551 = 1363) ի մայրաքաղաքս Տփիսիս ընդ հովանեաւ սուրբ Ամենափրկչիս»:

Տփիսիսի հայ գրչութեան դպրոցը և, ընդհանրապէս, հիւսիսային Հայաստանի մեր միւս գրչութեան դպրոցները կարեւոր են այն տեսակէտից, որ նրանք արժէքաւոր նիւթ են տալիս մեզ՝ ուսումնասիրելու մեր և մեր գրացի վրաց ժողովրդի յարաբերութիւնները իսկ ամէն մի վաւերագիր,

որ այս կամ այն չափով լուսարանում է մեր և մեր հարեւան ժողովուրդների քաղաքական, տնտեսական և կուլտուրական փոխյարաբերութիւնները, ինչ խօսք, որ մեզ համար, յատկապէս այժմ, վերին աստիճանի արժէքաւոր և զնահատելի է:

Ձեռագրի վերեւ բերուած յիշատակարանի ուսումնասիրութիւնից պարզուում է, որ ձեռագրի պատուիրատուն է հանդիսացել Սիւնեաց դպրոցի նշանաւոր ուսուցչապետ Յովհաննէս Որոտնեցին (Եսայի նշեցու աշակերտը, Գրիգոր Տաթեւացու ուսուցիչը): Այդ մասին յիշատակարանում կարգում ենք. «Գրեցաւ . . . ի խնդրոյ տիեզերալոյս վարդապետին Յովհան(ն)իսի, որո(յ) գաւառն և հայրենիքն Որոտն է, զոր Տէր Աստուած վայել տացէ» (թերթ 227 Ե):

Որոտնեցին, ինչպէս յայտնի է, ամէն կերպ աշխատել է մօտիկ և հեռաւոր գրչութեան օջախներում ընդօրինակել կամ ընդօրինակել տալ և Սիւնիք բերել բոլոր այն ձեռագիր ընդօրինակութիւնները, որոնք չկային Սիւնեաց դպրոցում: Ներկայ ձեռագիրը մի նոր ապացոյց է Որոտնեցու գրասիրութեան և գրահաւաքութեան: Հաւանական է, Որոտնեցին տեսել կամ լսել է մեր այս ձեռագրի մայրը (πρωτος γραφης) հանդիսացող ձեռագրի մասին և, ցանկանալով նման բովանդակութեամբ ձեռագիր ունենալ Սիւնեաց դպրոցում, պատուիրել է ընդօրինակել այն:

Ձեռագրի բովանդակութեանը նայելով, կարելի է ենթադրել, որ Տփիսիսում եղածի մայր ձեռագիրը բերուել է մեր քաղաքամայր Անիից, որովհետեւ ձեռագրում պարունակած նիւթերի մեծ մասը գրուել կամ մեկնուել են Անիում ապրող հայ հեղինակների կողմից (Սարկաւազը և ուրիշները):

Գրչի անունը յիշատակարանում ջնջուած է: Անհրաժեշտ է նկատել, որ այդպիսի դէպքեր ձեռագրերում յաճախ են պատահում: Յիշատակագրի անունը սովորաբար ջնջում են երկու պատճառով. առաջին՝ երբ ուշ շրջանի գրիչներից մէկն ու մէկը գրագողութիւն է անում, ջնջում է նախորդ գրչի անունը, իր անունը նրա տեղը գրելու նպատակով, և երկրորդ՝ երբ ձեռագրի գրիչը վատահամբաւ մէկն է հանդիսանում և յետագայ սերունդները չցանկանալով նրա յիշատակը պահել՝ ջնջում

են նրա անունը: Տուեալ յիշատակարանի գրչի անունն ջնջուելու պատճառը, մեզ թուում է, վերև յիշուածներից առաջինն է: Գրչի անունը սակայն յիշատակարանում վատ է ջնջուած և խոշորացուցով հնարաւոր է լինում կարդալ «Յուսիկ» անունը՝ «Եւ զմեղաւոր գրիչս Յուսիկ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած զձեզ յիշէ»:

Ձեռագիրը ներկայումս անբաւարար վիճակում է: Նա թերի է սկզբից և վերջից: Ձեռագրի միջից ևս թերթեր են պակասում: Ձեռագիրը կաշեկազմ է՝ դրոշմագարդ: Ձուների պահպանակներու Գրուած է միասին, բոլորագրով. վերնագիրը՝ կարմիր մելանով: Մանրանկարչութիւն չունի:

Ձեռագրում, բացի վերև բերուած յիշատակարանից, այլ յիշատակարան չկայ: Միայն տարբեր տեղերում կան երեք փոքրիկ յիշատակագրութիւններ, որոնք առանձին արժէք չեն ներկայացնում: Առաջին յիշատակագրութիւնից երեւում է, որ ձեռագիրը Յակոբ Եպիսկոպոսի երեքնի սեպհականութիւնն է եղել: Յիշատակագրութեան մէջ այդ մասին ասւած է. «Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս վերջին ստացող սուրբ գրոցս Յակոբ Եպիսկոպոսն և ծնողսն իւր. ով որ յիշեալ յիշեալ լիցի Քրիստոսէ ամէն» (թերթ 5 a): Յիշատակագրութեան գրչութիւնը XVIII դարի է:

Միւս երկու յիշատակագրութիւններն աւելի կարճ են և իրար նման: Այդ յիշատակարաններից երեւում է, որ ձեռագիրը նուիրուած է սուրբ Յակոբայ վանքին. «Յիշատակ է երուսաղէմ ի դուռն սրբոյն Յակոբայ» (թերթ 16 a): Բայց թէ ո՞վ է նշուողը, ե՞րբ է նուիրել — այդ մասին ոչինչ չի գրուած: Հաւանական է, Սիւնիքից եկած մի որեւէ ուխտաւոր բերել և նուիրել է վանքին՝ թողնելով իր յիշատակագրութիւնը:

Ձեռագիրը, ինչպէս ասացինք, գիտական նիւթերի ժողովածու է: Ժողովածուի մէջ ընդօրինակուած են Շիրակացու թուաբանական աղիւսակները, Յովհաննէս Սարկաւազի «Յաղագս անկիւնաւոր բուռց» աշխատութիւնը, Հերմիսի իմաստասիրական տեքստը (որը դեռ չի հրատարակուած) և արժէքաւոր այլ նիւթեր:

Ձեռագիրն սկսում է կրօնական մի գլուխակարգութիւնից, որը սկզբից թերի է:

Մեզ հետաքրքրող ծածկագիրն ընդօրինակուած է թերթ 3 a-ում: Նա բաղկացած է 13 տողերից: Սկզբում հայերէն սովորական տառերով գրուած է «Պղատնի Է», այսինքն՝ Պղատնի ասածն է, Պղատնի գրածն է: Ծածկագրութեան վերջում, դարձեալ հայերէն տառերով, գրուած է երկու փոքրիկ տող ոտանաւոր՝

«Թե դպիր ես ընթերցիր,
Թե sqks՝ յիմարեցիր»:

Ընթերցողին ուղղուած՝ գրչի վերաւորական այս երկտողը կարծես աւելի է հրահրում ընթերցողին՝ անպայման խորամուխ լինելու ծածկագրութեան գաղտնիքի մէջ և վերծանելու այն:

Ի դէպ՝ ծածկագրութիւնից առաջ կամ յետոյ՝ նման զրչախաղեր սովորական են մեր մատենագրութեան մէջ: Որպէս օրինակ կարելի է յիշել Կաֆայեցու ծածկագրութիւնը, որից առաջ գրուած է. «Այս է փակագիր, իմասունն իմանայ, անիմասն զարմանայ» (ՀՍՍՌ Մատեն. № 7709, էջ 395): Կամ մի ուրիշը, Սրապիոն վարդապետի քարոզգրքի ծածկագիրը, որի վրայ կանգ է առել իր ժամանակին ակադեմիկոս Ն. Եւ. Մառը «Հանդէս Ամսօրեայ»-ում: Ծածկագիրն իր վերջում ունի. «Եթէ դպիր ես՝ նայ կարգա, չէ՝ նա վզիդ տուր և հազայ» («Հանդէս Ամսօրեայ», 1892, էջ 52): Այս բոլոր երկտողերի նպատակը մէկ է — շահագրգռել ընթերցողին՝ անուշադրութեամբ չանցնել ծածկագրութեան կողքով: Անհրաժեշտ ենք համարում նախ բերել ծածկագրութեան բուն տեքստի՝ ձեռքով արտանկարած օրինակը և ապա՝ զբաղուել վերծանութեամբ:

Պէտք է խոստովանել, որ վերծանութիւնը մեզ յաջողուեց մեծ դժուարութեամբ, որովհետեւ ձեռագրում ծածկագրի որոշ տառեր, գլխաւորապէս տողի վերջում, չեն երեւում կամ շատ վատ են երեւում և այդ տառերը կարելի է մի քանի նշանակութեամբ կարդալ (տե՛ս ստորեւ):

Ծածկագրութեան տեքստում, ինչպէս տեսնում ենք, հայերէն տառերով գրուած է և կարելի է կարդալ հետեւեալ բառերը՝ «Պղատնի», «Որփեւս», «Եւ», «Աւխարհացոյցին ցկարագրեալ այսպիսի» և վերջին երկտող ոտանաւորը, որը բերեցինք վերեւ:

ւում: Որ այս տեքստը ծածկագրութիւն է, այդ պարզ երեւում է վերջին ոտանաւորից: Պարզ է, որ եթէ այդ տեքստը ուտանաւոր չլինէր, հեղինակը չէր գրի՝ «Թէ դպիր ես քնքեցիր»:

Ծածկագրութեան վերծանութիւնը մեծապէս դժուարացրեց բառանշատման բացակայութիւնը և մի քանի հազուադէպ գործածուող բառերի կիրառումը: Սակայն որոշ աշխատանք թափելուց յետոյ, մեզ յաջողուեց այդ ևս յաղթահարել:

Ուտանաւորութիւնից պարզուեց, որ ծածկագրուած են վեց հատուած տարբեր հեղինակներից, որոնցից անունով յիշուած են միայն երեքը — Պլատոնը, Որփեւսը և Եւրիպիդեսը: Ծածկագրուած վերջին երեք հատուածները — ժողովրդի մէջ սովորական դարձած ասացուածներ են: Անհրաժեշտ ենք համարում այստեղ բերել ծածկագրութիւնը մեր կողմից, բառանշատուած և վերծանուած ձեւով:

Պրագմա

ΣΑΚΝΖΗΔΑΜΖΔΑΜΦΑΝΖΗΝΙΑΡΘΕΛ

ΝΨΔΝΖΔΜΕΝΑΙΝΙΑΡΘΟΦΘΗΝΔΡΑΞΗ

ΝΕΥΗΔΡΕ: ΠΡΦΕΛ ΜΗΤΕΔΑΝΕΤΕ

ΜΗΗΝΖΑΔΕΝ: ΕΥΔΙΡΝΔΜΕΝΑΙΝΗΥΛ

ΕΥΧΔΜΡΕ: ΕΥΡΗΤΗΧΕΣ -- Աշխարհ

ացուցին նկարագրեալ այսպիսի Ճարգոհո

ΔΡΟΡΟΧΗΡΔΑΔΡΗΚ: ΕΥΖΩΡΟΚΝΟΔΔΕΡ

ԻՐԻՄԻՐԾՕՐ: ՕՐԼԻՐԻՆՈՇԳՕՐԵΔԴΔ

ΚΨΛΥΗΝ: ՕՐԻԾՕՄԵՐՄΔՆԷԶΗ

ՕՆՈՇԵՐԱԿՐԵ: ΔΡΕΦΔԿՆԿՕՐԲԳՕՉԻ

ΔԳԵ ΕΥΟΖΜΤΔΝΕ: ԹԵԳՎԻՐԵՆՆԵՐԳԻՐ

ԹԵՆԳԵՆՆԵՐԳԻՐ

Ծածկագրութեան վերծանութիւնից պարզուեց, որ ծածկագրուած բնագիրը հայերէն է և ծածկագրուած է հետեւեալ սկզբունքով.

ա) Բնագիրը հիմնականում ծածկագրուած է յունարէն տառերով: Յունարէն այբուբէնից գործ են ածուած հետեւեալ տառերը՝ α, ε, ζ, ς, λ, κ, γ, ι, ν, ο, ξ, τ, ρ, φ, θ (դ-ի իմաստով):

բ) Հայկական այբուբէնի այն տառե-

րը, որոնք չկան յունարէն այբուբէնի մէջ, նրանց փոխարէն օգտագործուած են տառեր հայերէն այբուբէնից: Հայերէն այբուբէնից օգտագործուած են՝ բ, գ, խ, ծ, ձ, ը, զ, է, ք:

Եւ գ) Ծածկագրութիւնը բարդացնելու նպատակով, չորս տառի համար ստեղծուել են նոր նշանագրեր: Այդ նշանագրերը ըստ ստեղծուել են դ, պ, վ, ց տառերի համար:

ՊՐՈՖ. Ա. ԱՐԲԱՀԱՄԵԱՆ

(Մնացեալը յաջորդ բիւլով)



162-98